

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շար. տես Բազմավեպ 1930, էջ 210)

Ասորա-Բաբելոնական եւ Մարա-Պարսիկ Գեղարուեստն ազդեց է
Հայկականին վրայ.

Ոչ մի տարակույս որ հարեւան ժողովուրդներն զգալապէս կրած են փոխադարձ ազդեցութիւն քաղաքակրթական ասպարիզի մէջ. առ այնքան պարզ և հասկանալի իրողութիւն մ'է, որի վրայ կանգ առնել աւելորդ կը համարիմ. Նախապատմական ժամանակներուց, առաջին քաղաքակրթութեան կարապետներն համարուած են Քաղզէացիք, ժողովուրդ մը որ հնդկ-եւրոպական ցեղին կը պատկանի և բնակած է Տիգրիսի և Եփրատի գետախառնունքի տափաստանները. ասոնցէն անցեր է Եգիպտոս և ապա առ Յոյն և մի ըստ միովէ առ ամենեւին. Հայաստան նահմանակից լինելով Միջագետքի, Մարաց-Պարսից և Ասորաց, պէտք է ասել որ նա ալ ենթարկուած լինելու է իւր դրացի ազգերու մշակութային ազդեցութեան:

Արեւելագէտ հնապատում գիտնականներն, նախ ազդուած յունական պատմագիրներէն, կը սխրէին ճոխանալ Քաղզէա-Ասորեստանեան քաղաքակրթութեան վերայ, իսկ վերջին ժամանակներս Բաբելոնի, Նինուէի եւն. կատարուած պեղումներուն ստացուած արդիւնքէն, ուսումնասիրելով դիւանական մեհենագիր մատեանները, կատարեալ հիացմունքով խօսում են այդ ժողովուրդների անցեալի և կատարած պատմական դերի մասին. հիացմունքով նոյնպէս նկարագրում են անոնց կերտած հոյակապ և վիթխարի ապարանքները, իբրեւ մի ստեղծագործութիւն

այդ ժողովուրդներին բնիկ և սեփական: Ի միջի այլոց շեշտուած է նաեւ որ Հայաստանի տիրապետութիւնը իրենց ձեռքում պահած են երկար տարիներ: Ուրեմի Հայաստան թէ սահմանակից լինելով և թէ երկար տարիներ ենթարկուած անոնց տիրապետութեան, հարկաւ նուաճուած երկիր մը ուզէր չուզէր պիտի կրէր օտար լծի հետ նաեւ անոր քաղաքական և կոյտութական ազդեցութիւնը:

Ի բաց թողլով գիտութեանց և արուեստից մասնաւոր ճիւղեր և միայն զբաղելով ճարտարապետական զեղարուեստի մասին, պէտք է ամենայն զգուշութեամբ նկատի առնուել, ոչ միայն Նիւթական աշխարհի նուաճումը, յաղթողի տիրապետութիւնը, այլ և հպատակ ազգի հոգեկան և մտաւորական աշխարհը, անոր ձեռք բերած զարգացումն և բնածին մշակոյթն, մինչեւ այն օրն երբ բիրտ ոյժն, կոխելով մարդկային իրաւունքը, կը զրկէ իւր դրացին աստուածատուր ազատութենէն: Որովհետեւ Հայ ազգն պատկանելով Արիական ազնիւ ցեղին, աւելի ընդունակ եղած է սկզբնական քաղաքակրթութեան, անոր համար որ ինքն նախազտակ եղած է հոյոյ, որով ճարտարուեստի, ուստի այդ Յաբեթածին ազգն պիտի ուզէր շղթաներով պրկուել և զամուլի նովկասի ժայռերու վրայ, քան խոնարհիլ վայրագ ժողովրդեան բարուց վարուց՝ օրինակութեամբ կամ հետեւողութեամբ:

Արիական ժողովուրդներու երականերու մէջ կը հոսի արդէն հազարաւոր տարիներու քաղաքակրթութիւն, մինչ չեւ աստ լանդիտներն խորատուգոտած էին, որ զինի անոնց գաղթականութիւններն լցին Միջերկրականի աւազանն, Թեսսաղիոյ դաշտերն, Փոնգաքսոց աշխարհն՝ կանգ առին Պամբիբի բարձունքներու և ինդոսի ափանց վրայ վերածաղկեցնելու արիական մշակոյթը, Որով եթէ Հայաստանի ուրարտական թագաւորութեան մի մասն ընկճուեցաւ Ասորա — բարելական բանակներէն, սակայն պահեց իւր ազգային քաղաքակրթութիւնն և թերեւ ի հակառակէն ունեցաւ իւր ազդեցութիւնն տիրող ազգի քաղաքական կեանքին մէջ, երկրի շինարարական և մշակութեան գործերու մէջ, թերեւս ասուով եմ, որովհետեւ պատմութիւնն մեզի տուած է շատ մը անակնկալներու ուսանելի օրինակներ, ըստ այնմ մարթ է մեզի դատել անցեալն նաեւ մեր երկրի և ժողովրդի մեր դրացիներու հաւանական ազդեցութիւնն Հայ ժողովուրդի վրայ կամ փոխադարձ։ Միակողմանի ազդեցութիւն եղաւ այն՝ ինչ որ Հոռոմ իւր բարձր մշակոյթին ենթարկեց Սպանիան և Գաղղիան, տալով անոնց քաղաքակրթութիւնն և լեզու նոր, իսկ ինքն անոնցէն բան չառաւ, բաց ի ոսկիէն և արծաթէն, ուր կ'աշխատէին բնիկներ և զերինքը երկրի հանքերուն մէջ։ Ասոր հակառակ Հռոմի զէնքի տիրապետութիւնն Յունաստանի մը շակոյթի վրայ ոչ մի առաւելութիւն չըտուաւ, այլ փոխադարձ յաղթանցեալ յուսական բարձր մշակոյթէն և Յունաստան տիրեց բարոյապէս, զեղարուեստով և ի մաստափրութեամբ իտալիոյ և նուաճեց զկապիտոլիոնն, Նոյն իսկ Հռոմի մասենա գիրներու վկայութեամբ՝ լեզուով և դաստիարակութեամբ։ Բնութեան օրէնք է, հզօրն ապարին պիտի տրիք բնութեամբ իսկ պարտուածը իմաստասիրութեամբ։ Մեծն Ալեքսանդրի աշխարհակալութիւնն թէ զենքով և թէ հանճարով փոխեց Փոքր և մեծ Ասիոյ երեսը թէ և այդ աշխարհներն ունէին արդէն տեղական բնաշխարհ.

հիկ քաղաքակրթութիւն, սակայն յունական պատուաստի արդիւնքն եղաւ աւելի ուռճալիւր և բեղուն, և եզական դիրք ըստեղծեցին Ասորիք և Եգիպտոս, ուր փայլեցան Անտիոք և Ալեքսանդրիա իրենց գիտութեամբ և գրականութեամբ։ Սակայն կարծուած հզօր և յառաջադէմ Բաբելոն տանն, իւր բարձր պարիսպներու և կախաղանաւոր պարտէզներու մէջ հիւրասիրելով Մեծ աշխարհակալը, բնաւ մի բան չշահեցաւ, մանաւանդ թէ չուզեց շահիլ, անոր համար ալ հին քաղաքակրթութիւնն ճիաց զօսացած և փոշիի հողաբլուրներ կը ծածկեն զայն։ Պատճառները այդ անբացատրելի անհետացման խոր են և զանազան։ Նախ որ Միջագետքի ժողովուրդները միատարր մի ցեղի չէին ստեղծուած։ այդտեղ Նոյի երեք որդւոց սերունդներէն զանազան մեծ ու պզտի հատուածներ տեղ զբաւած էին երկու գետերու երկարութեամբ դէպ ի հիւսիս, Հնդկային ծովու ծովախորշի ափերու վրայ որ կ'ըստի Պարսից ծոց, ի սկզբուն Գաղղէացիք բնակութիւն հաստատեցին, ջրի միջոցաւ հաղորդակցութեան մէջ էին Հնդկի աբիական ցեղերու հետ և թերեւ նախապատմական ժամանակներէն պատահապէս հոն ապաստանած ստեղծեցին նուրբ քաղաքակրթութիւն մը, զոր Ուս քաղաքի պեղուցիներ ցոյց տուին նաեւ թէ Կրետէի և Եգիպտոսի հնագոյն զարգացման հետ կապ ունեցած է, որ ըստ կարգին ենթադրել կու տայ թէ Փիւնիկեցւոց միջոցաւ հաղորդակցութիւն մը ունեցած ըլլան Միջերկրականի արմեկոյտ ցեղերու հետ։ Բարեւալացիք զօրանալով, իրենց տիրապետութեան ենթարկեցին ըզ-Քաղղէացիս, բայց չկարողացան իւրացնել անոր քաղաքակրթութիւնն վասն զի Բաբելոնաստան անցքի վրայ էր և կը զբաւնէր երկու գետերու իրարու ամենամօշտիկ կէտին վրայ, ուր կը յանգէին անշուշտ արեւելքէն և արեւմուտքէն եկած վաճառականներու ճանապարհներն, որոց վաճառատունն էր Բաբելոն քաղաքն։

Ուստի ճոքա զբաղած էին երկու բանով՝ մէկ աշխարհակալութեամբ և միւս վա-

ճառաշահութեամբ, և կը շահագործէին հարստութեան երկու աղբիւրներ, բարեւաջի բնիկ ժողովուրդն չէր զբաղեր գեղարուեստով, այլ հաւանօրէն եկուորներն և գերիներն էին շինուածապետներն և շինողներն:

Բարեւաջոց իշխանութիւնն կործանեցին Ասորեստանցիք և առաջնութիւնն առաւ Նինուէ, որ իբր մայրաքաղաք ոչ մի բանով յետ չէր մնար Բարելոնէն: Սեմական ցեղի ստեղծագործութիւններն նորութիւն չմտուցին գեղարուեստի մէջ, մի և նոյն ծանր և կոպիտ ճարտարապետութիւնն է որ կը տիրէ Սարգոնի պալատի վրայ: զոցցես նոյն դպրոցի քարագործներն աշխատեց և շինեց են երկու զբլաւոր քաղաքներն՝ Նինուէ ալ չօգտուեցաւ բնաւ Ալեքսանդրի աշխարհակալութեան բարերար ազդեցութենէն, ոչ մի մտաւորական շարժումն ունեցաւ և քառուելով իւր հին պատեանի մէջ, Թադուսցաւ հողի տակ: Օտարներու կառավարութիւնն աղիտարբեր եղաւ Միջագետքի ժողովուրդներուն, որոնք սեփական մշակոյթ չկարողացան ստեղծել որ սերունդէ սերունդ անցնելով երթալով զարգանար ու ժողանար և անկման շրջանին իսկ ժառանգութիւն թողուր նոր տիրապետողին որ հպատակէր իւր մարջ ստեղծագործութեան:

Ասորա — Բարեւական և նաեւ Մարա — Պարսիկ գեղարուեստի զբառն եկամուտ ըլլալն, իսկոյն յայտնի կը լինի երբոր մէկն դիտողութեան առնու և համեմատէ տեղական մանր արուեստի հետ. տարբերութիւնը մեծ է: Լուսլրի պալատի ճոխ թանաքառնում ցուցադրուած առարկաներն բաւականէն աւելի պերճախօս են, հասկացնելու իրենց սկիզբն և զաղթալայրն ուսկից մեկնեք են: Այդ առարկաներն բաժանուած են թագաւորական և ժողովրդական: Թագաւորական ապարանքներու վրայ թափուած գեղարուեստն քանդակներ, դրուագներ, արձաններ և յատակագծեր, օտար քարագործի, արձանագործի և ճարտարապետի հեղինակութիւնն են: Խորաքանդակ արձաններն, անդրիներն

մարդոց և անասնոց, արուեստն համեմատական է, ուժեղ և հմուտ վարպետի գործ, մինչդեռ տեղական արուեստաւորներու մանր մունր գործերն, մարդոց և անասնոց նմանութիւններն թոյլ են, և արուեստն անիմաստ և մանկական: Այդ սկսնակ արուեստն չորս հազար տարի չէ յառաջադիմեր, և այսօր իսկ նոյնն է մեր ժամանակներում ասիական յետաձագ ազգերու մէջ: Մինչդեռ Յոյն — Հռոմէական արուեստի մէջ զլուս գործոցներն հրաշալիք են, բայց տնական առարկաներն նոյնպէս շնորհալի են և գիւղերու մէջ գտնուածներն ալ ճաշակէ զուրկ չեն: Ետնորակաւ թանգարաններու մէջ կարելի է տեսնել այդ ազգի սկզբնակ գործերն՝ մինչև հասնիլ այն նորութեան որ զգիտուններն տարակոյսի մէջ կը ձգեն, ասելու տեղական արուեստ է թէ եկամուտ՝ Միջերկրականի քաղաքաւթութեան արդիւնաբերութիւն, զորս վաճառականներն փոխադրել են աշխարհէ աշխարհ:

Ասորա — Բարեւական արուեստն կամ նմանութիւնն հետեւանք է իւր աշխարհակալութեան մէջ կողմէն Փրինկլէի և Եգիպտոսի, միւս կողմէն Ասորիքի և Կապպադովկիոյ: Եգիպտական ազդեցութիւնն գերակշիռ է Բարելոնի գեղարուեստի վրայ քան թէ կիլիկեան — Գամրացի: Հիթիթներն ալ իրենց վերազրուած գեղարուեստով, 200 տարւոյ տիրապետութեան շրջանին, բան մը անշուշտ սորվեցուցին Միջագետքի ժողովուրդներուն գէթ փորագրական (graphic) արուեստն որքան նախնական, բայց շօշափելի նմանութիւն մը կը տեսնուի գաղափարի և գրչի մէջ, աւելի կոպիտ են, սակայն ձեւն և բնատուրութիւնը կը կրեն այսինքն տակաւին բարբարոս ժողովրդեան գաղափարագրութիւնն:

Ասորա — Բարելոնեան ինքնակալութիւնն եթէ կարելի է համեմատել նորագոյն ազգերու միոյն հետ, սա պիտի ըլլար ասիական Սիլեուգներն թաթարներու թիւրք հրոսակներու հետ, որոնք ներս խուժելով յառաջաւոր Ասիան և ոտնակոխ ընելով

Փողըն մինչեւ Վոսփորի ափերն և ան-
դրագոյն եւս, նոցա նուաճեցին զէնքի ու-
ժով քան զիրենց անհամեմատ զարգացած
ազգիք և ջնջեցին ամէն քաղաքակրթու-
թիւն տիրապետած երկիրներու մէջ, ըստ
մեզ առանց որ և է քաղաքակրթութիւն
և զեարուեստ ստեղծելու, թէ և գտնուե-
ցան արեւմտեան աշխարհում հռչակաւոր
գիտութեամբ ճարտարապետներ, որոնց
յանձն առին մատեաններ հրատարակել
դրոշմելով ճակատին վրայ Միսիսիւսեան
ճարտարապետութիւն, այսինքն թուրք ազ-
գի, որ ճիշդ չէ. պէտք է զանազանել
Արաբական ճարտարապետութիւն, որ ար-
դիւնք է անոնց յունական իմաստասիրու-
թիւնն իւրացնելուն որ ներշնչեց գեղեցկին
ճաշակն ու Սպանիոյ մէջ կերտեցին հրա-
շալի մզկիթներ և պալատներ, իսկ Վոս-
փորի վրայ թառած թուրքերն ալ շինեցին
մոնկոլական զաղափարով շէնքեր որոնց
ոչ մի նորութիւն և յառաջադիմութիւն
ցոյց տուած են գեղարուեստի մէջ։ Թող
զհին յունական եկեղեցիքն, զորս մզկիթի
վերածեցին և սոցղոցոցին յաւելուածնե-
րով, մնացած գեղեցիկ և հոյակապ շի-
նութիւնք Հայ և Յոյն ճարտարապետներ
կանգնեցին. զոր օրինակ Պալեան ընտա-
նիքէն անուանիներն կը կրէին արքունի
ճարտարապետ տիտղոսն։

Ասորեստանի հզօր ինքնակալներն փու-
նիկէի և Եգիպտոսի տիրելէն իսկ յետոյ,
իրենց աղաւակն ճարտարապետութեան
մէջ ոչ մի փոփոխութիւն մտցուցին։ Հըս-
կայական շինութեամբ հիմնական տարազն
էր քառակուսին, մօտիկ և իրարու վրայ
դիզուած, որոց վրայ կը բարձրանար աշ-
տարակն կամ դիտանոցն, աստեղաբաշ-
խական զննութեանց համար. որոնք զուրկ
էին արտաքուստ զարդեր և քանդակներէ.
կը բացակայէր սիւներու և կամարների
հանճարեղ զործածութիւնն. նոյնիսկ տա-
րական երկիրն շատ անգամ կը պակսէր,
պատուհաններու և պատշգամբներու զաղա-
փար չունէին և իրենց լոյսը՝ լուսաւորե-
լու երկար սրահները, մի միայն զոնէն
կ'ընդունէին։ Ինչ ապականած օդի մէջ

կը բնակէին, Թագաւորական մտրակի տակ
գերինքը աշխատեի են անհաշիւ կերտելու
անհեթեթ աղիւսի բլուրներ. վարպետներ,
լիարուս վարձատրութիւն ստանալով
զարդարեւ և ճոխացուցեւ են դրուագնե-
րով և արձանական քանդակներով ապա-
րանքի հանդիսաւոր մուսքի դռներն և որ-
մերն, զոհացնելու տէրը միակ իշխանը,
որ երկնքի Աստուծոյ փոխանորդ և լիա-
զօր ետեղակալը երկրիս վրայ կը հրա-
տարակէր ինքզինքը. և իւր հպատակներն
պարտական էին գի ձայն սրնգի և թմբկի
անկանել և երկիր պագանել պատկերին զօր
կանգնեաց արքայն՝ Նարուզդոնսորն։

Ինչ որ էր Բաբելոնի և Նինուէի աշ-
խարհակալներու բռնած ուղին և վարա-
ձեւն, նոցին հետեւեցան Մարաց և Պարս-
սից արքաներն, որոնք երկար տարինք
հպատակած էին Ասորեստանցոց իշխանու-
թեան։ Սակայն այս տարբերութեամբ, որ
արիական ցիլին պատկանելով աւելի բա-
րակամօտ էին և հակամիտ բարձր քա-
ղաքակրթութեան. և անոնց զարգացման
մեծապէս նպաստեց փողը Ասիոյ, Յոնիա-
կան ծովեզերեայ և մօտակայ կղզիներու
նուաճումն։ Ասոր հետեւանքն է որ Պերսե-
պոլսոյ և Շօշի եւն. շինութիւնք՝ փափ-
կադրուագ և կատարակտ յատակագծերով
ճոխացած են քան Ասորեստանիները։ Հա-
ւատացած ենք որ ինչպէս Մարաց և Պարս-
սից բանակներու և տորմիդի մէջ կային
յոյն ծառայողներ, զօրավարներ, այսպէս
նոցա աշխատողներն են նաեւ յոյն վար-
պետներ և արուեստաւորներ կերտելու և
զարդարելու արեւմտական ապարանքներն,
որով Մարա—Պարսիկ արուեստի մէջ ի
յայտ կու գան դեղանկար ձեղուններ,
սիւներ գեղեցիկ խոյակներով և զմբեթի
սաղմնաւորումն։

Դարերէն, Արտաշէսի ապարանքներուն
դրուագներն նուրբ են և խորաքանդակ-
ներն համեմատական. իսկ ջնարակուած
անմահ զնդի զինուորներու արձաններն
յունական ստեղծական տարազն ունին,
որ եթէ իսկական յոյն մը չէ շինողն,
թերեւս տեղացի մը եղած լինի յոնիական

զգորցնելուն միոյն աշակերտած: Մեզ ամենքից աւելի հետաքրքրողն է, կիրութիւն վերագրուած Սարգիստանի գերեզմանին և ապարանքին նկարագրութիւնն, յորում քառակիւնի սենեկի մը (սովորական տան մը ծածքի պէս) անկիւններէն քաղելով իրարու վրայ հնձած քարերով կողովաձև գմբէթ մը կառուցուած է, որու նախագաղափարը Նոյի տապանն է և Հայաստանի մէջ, վառելիքի համար չորացուած թրիքի քառակուսի աթարներով շինուած կլորիկ կամ քառակուսի ամրոցները որոց բարձրութիւնն կը հասնի չորս, հինգ միջրի և իբր նմուշ կրնան ծառայել քարակոփի մը նոյն ոճով քարէ կառուցանելու: Սակայն ոչ Սարգիստանի և ոչ բարեկացոց ապարանքներու մէջ յայտնուած գմբէթներն կրնան նախագաղափար տուած ըլլալ հայկական գմբէթին, որ անշատ սիւներու և քառակուսի ձգուած կամարներու վրայ պսակով մը բռնուած է: Յետոյ, եթէ իսկական գմբէթն յիշեալ հին ազգերու ճարտարապետական գիւնը լինէր, նոցա առաջնութեան նախանձով լցուած հազար տարուան ընթացքում մի յառաջադիմութիւն, մի կատարելագործութիւն ցոյց պիտի տային տեղական արուեստի մէջ: Թնոր հակառակ՝ պեղումներէն դուրս եկած ճարտարապետական նախատարիքն հազար և աւելի տարիների ընթացքում ձուացած են նոյն նախնական ձևի մէջ, մինչև Հայկական զեղեցիկ դարութեանց և արուեստի վերածնութիւնն հինգերորդ դարում: Եւ որքան զարգացում և յառաջադիմութիւն մինչև տասներորդ դար, երբ Տրդատ ճարտարապետ կը շինէր Անիի մայր եկեղեցին և վերստին կատարեալ արուեստով կը վերականգնէր Ս. Սփիւռի հրաշատեսիլ գմբէթն, որ կայ և կը տեւէ, և դիմացիք է հազար զարուհներու, հազար ձմեռներու փառներորդ դարու լուսաւորեալ Եւրոպոյ ճարտարապետներն իրենց ղեռ ուսանելի բան և կը նշմարեն հոն:

Միջազգային մեծ ազգերու պատահական քաղաքակրթութիւնն, չէր կարող եր-

բեք բանաւոր ազդեցութիւն գործել Հայաստանի ժողովուրդի վրայ, որ նկարագրով լեզուով և սովորութեամբ կը զանազանուէր Միջազգային ազգերէն: Հայաստանի նախկին բնակիչներն որ կոչուած են Ուրարտացիք, որոց կեդրոնն էր Տոսպ և Վասպուրական գաւառներն, նոցա ըստեղծած էին աւելի բարձր քաղաքիւթութիւն, որ սերտ կապ ունէր, ինչպէս աշխարհագրական անուններէն կարելի է դատել թէ արեւելեան արիական հնդկներու և թէ քաղղէական Ուտ քաղաքի հետ, որ կեդրոնն էր ծաղկած Քաղղէաստանի: Վանեան Հայաստանիւն նախ գտնող եղաւ սեպածե գրութեան, որոյ հետեւողութեամբ Ասորա-Բաբելոնացիք աւելի դիւրացուցին և յոյն քարագործները Դարեհի յուշարձաններու վրայ եռալեզու քանդակցին, և այնպէս ապագայի ձեռքը յանձնեցին ասոր ընթերցման բանալին: Մինչ վանեանք գործածութենէ դուրս ձգուած ըլլալով տիրապետող իշխանութեան կողմէ, քաղցին անձանթ և անբարբառ: Նոյն իսկ գիր ստեղծելը նշան է բարձր քաղաքակրթութեան, որոնք ըմբռնելով պատմութեան արժէքն, ուզեցին իրենց միտքը, կամքը թողուլ յետնոց և ապրիլ ապագայ սերունդներու հետ:

Քաղղէացիք մի ցեղ էին, տակաւին անձանթ, կարծես ժառանգած էին, տապանէն ելած ասորիներ սերունդներէն՝ նախաջրհեղեղեան քաղաքակրթութիւն: Կայենի որդիք նախ շինեցին քաղաք, «Յորադ՝ հնարեց քնար և երգ, Թորէլ՝ ճարտարապետ՝ պղնձոյ և երկաթոյ, Նոյեմայ անտեց ցոյրն՝ ոստայանակութիւն»: Այդ արուեստներու բոյնն եղաւ Քաղղէաստան իւր գրչիւսութիւն ընթացքով, երբ արեւելքէն (?) եկած ռազմութիւնն հաւաքուեցաւ Սենաար դաշտի մէջ, ուր խառնակուեցաւ ազգերու լեզուն, (ոչ Բաբելոն) և ցրուեցան «կղզիք ազգաց» երկրիս երեսը: Քաղղէացիք ուժեղ գտնուեցան և իրենց ազգը Պարսից ժողովն բռնած տարածուեցաւ Հայաստան և գնաց մինչև Պոնտոսի ափերն, աստեց յիշատակն և անունն մինչև ցայս

օր պահեց Հին Հայաստանն Տայոց աշխարհի և Պոնտոսի լեռնաշղթաներու վերայ՝ Խաղտիք, որ այժմ Լազիստան է կոչուում:

Եզրափակելով վերեւ գրածնիս կը յօժարինք յայտարարել որ Հայաստանի երկու հզօր դրացի ազգեր, իրենց ամենայն գերիշխանութեամբ քնաւ ազդեցութիւն չեն ունեցած Հայաստանի ճակատագրի վրայ, ընդհակառակն օգտուել են Հիթլերէններու քարազորներէն և Հին Հայոց վանեան գրերէն և ճարտարապետութենէն, եթէ կարելի է այսպէս ասել: Ինչաւ տարօրինակ գաղափար չեմ կարծեր որ թուի մեր յայտնած միտքն թէ մինչեւ ցարդ Նիւուէի, Բարելիւնի, Պերսեպոլսոյ և Շօշի եւայլն պեղումներէն դուրս ելած զարմացուցիչ աւերակներն իրենց բոլոր քանդակներով, օտար քաղաքակրթութեան բեկորներ են, և ոչ տեղական մշակոյթ: Ինչ որ ժամանակակից ազգեր գործած են և կը գործեն, նոյնը արած են Ասորեստան և Մարաստան: Հռոմի Պանթէոնը արեւելցիներ շիներ են ոչ Հռոմայեցի ճարտարապետներ, Տրայանոսի գեղեցկագոյն Ֆորումն (հրապարակը) Դամասկացի Ապոլլոնորոս ճարտարապետը շինած է, նոյնպէս Դանուբի վրայի առաջին քարէ կամուրջն. Պետրոգրադի կազանակի, Իսակովսկի Եկեղեցիք շինած են Խալապի ճարտարապետներ: Նոյնիսկ Ֆրանսայի ամենածաղկեալ դարուն Պարիզու մէջ կերպեր են իտալ ճարտարապետներ ապարանքներ և կեկեղեցիներ զոր օրինակ Ս. Սիւլպիս եւն. Թողունք աւելի հեռաւոր երկիրներէ և երկու Ամերիկաները: Դիցուք թէ մեզնէ չորս հազար տարիներ յառաջ պատահած լինէին այս զէպքեր, չպիտի վերագրուէր տեղական կոլտուրայի և տեղացի ճարտարապետի: Այնուհանդերձ որ անոնց նմաններն և անոնց շարունակութիւնն հետեւեալ դարերուն կը տեսնուին և իրաւունք կու տան այս ենթադրութեան. իսկ Միջագետքի մայրաքաղաքներունը անհատականի գործեր են, որք իրենց կենդանութեան ժամանակ երեւցեր են և յետոյ

անոնց անցմանէ յետոյ շարունակութիւն չեն ունեցած: Կոնկորտի հրապարակի եւ գիպտական ոպելիսկը Սեստոտրիսի ժամանակէն այսօր կը մնայ յուշարձան մը Մեծին Նապոլէոնի:

Գեղարուեստ և գրականութիւն կամ գեղեցիկ դպրութիւն համընթաց քայլով յառաջացեր և զարգացեր են ազգերու կեանքի մէջ. ուստի երբ Հայ Արշակունի թագաւորներ գլուխ անցած են աշխարհաշէնութեան և գրականութեան, նոքա տարած են Հայ ժողովուրդը զարգացման և յառաջադիմութեան ճանապարհով դէպ ի բարձրագոյն գաղափարական նպատակը:

(Շարունակելի)

Հ. Գ. ՆԱՍԱԳԵՏՅԱՆ



ԳԵՊ Ի ԼՈՅՍ

Դեռ կը ճախրեմ, պարզած խոյանքը մտքիս
Դէպ ի աստղերն Անհունին.

Դեռ կը ճախրեմ, բանտած հոգւոյս մէջ խոհուն
կարմիր կայծերն հանճարին:

Լոյս կ'ուզեմ, լոյս, ո՛ր է աղբիւրը լոյսին,

— Աստղեր կ'ուզեմ համբուրել —

Աղ համբուրէն կ'ուզեմ որ լոյսը բռնի,

Յետոյ ըմպել, երազել:

Լոյսին կ'երթամ, անհունացած է հոգիս,

Իր տեսիլքէն ծաղկատի.

Հասած եմ արդ մինչեւ կատարն երազիս,

Ուր ինձ Աստուած կը խօսի:

Աստղերէն վեր, Անճախն զէմ եմ արդէն,

— Ահա աղբիւրը կեանքին. —

Սեղմած ուժգին բորբ երակէն ասմազուն՝

կը քամեմ շիթը լոյսին:

ՎԻՋԻՆ ՍՐԱՊԵՏՅԱՆ